ՈՒՂԵՐՁ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ

Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալը

Նախագահ Ռանդալ Ք. Բեննեթ
Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանի Նախագահության Առաջին Խորհրդական:

Սուրբ Հոգու պարգևը թույլ է տալիս յուրաքանչյուրիս, եթե արժանի ապրենք, ունենալ Նրա մշտական ընկերակցությունը: Նա ուսուցանում, վկայում, կրթում, սրբագործում է մեզ և կարող է օգնել յուրաքանչյուրիս ուրախությամբ դիմանալ մինչև վերջ: Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ Տիրոջ Հոգին կարող է խաղաղություն և ուրախություն պարգևել մեր հոգիներին, իսկ չարությունը, ատելությունը, հակառակությունը և չարիքը վերցնել մեր սրտերից (*Manuscript History of Brigham Young, 1846–1847*, comp. Elden J. Watson (1971), 529–30):

Սուրբ Հոգին, սովորաբար, խոսում է մեզ հետ ցածր մեղմ ձայնով, որը, հաճախ շշնջում է մեզ և լուռ հուշում տալիս (ՎևՈ 8.2–3, ՎևՈ 9.8–9, 1 Նեփի 17.45): Երբ մենք գտնվում ենք մի միջավայրում, որը լցված է աշխարհիկ բարձրաձայն շեղող երևույթներով և հակասական իրավիճակներով, Սուրբ Հոգու համար դժվար է ուսուցանել, կրթել և առաջնորդել մեզ: Նա կհեռանա մեզանից այնպիսի իրավիճակներում, որտեղ կա զայրույթ, վիճաբանություն, հակառակություն կամ դժգոհություն:

Այսօր շատ եկեղեցիներում ընդունելի է վիճաբանելը, ընդդիմանալը, հակառակելը կամ բարձր ձայնով կարծիքը պնդելը: Թեև այս ամենը կարող է հանդուրժվել այսօրվա մեր հասարակության մեջ, դա ընդունելի չէ ավետարանի մշակույթում և վանում է մեզանից Սուրբ Հոգին:

Նախագահ Ռանդալ Ք. Բեննեթ

Հակառակությունը մեր հարաբերություններից, մեր տներից և եկեղեցական մեր ժողովներից հեռացնելը մեծագույն կարևորություն է ներկայացնում: Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ «պատերազմը երկնքում արյուն թափելու պատերազմ չէր: Դա հակասող գաղափարների պատերազմ էր՝ հակառակության սկիզբ» («The Canker of Contention», April 1989 General Conference, Elder Russell M. Nelson): Այն սկսվեց հպարտության և եսասիրության պատճառով: Այսօր հակառակությունը գալիս է այդ նույն աղբյուրներից:

Հակառակությունը վերացնելն այնքան կարևոր է, որ դա եղել է առաջին սկզբունքը, որ Փրկիչն ուսուցանել է Նեփիացիներին՝ մկրտության մասին նրանց ուսուցանելուց հետո: Նա ուսուցանել է, որ «նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ»: Նա ուսուցանել է նրանց չհակառակվել մեկը մյուսին: Դա նշանակում է, որ մենք չպետք է հակառակվենք, վիճենք, հակաճառենք կամ բարձր ձայնով բանավիճենք մյուսների հետ (տես 3 Նեփի 11.28-30):

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ «մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25): Սուրբ Հոգին բերում է մեր կյանք լույս, հանգստություն, խաղաղություն, ներդաշնակություն և ուրախություն, մինչդեռ հակառակությունը բերում է խավար և թշվառություն և մեզ իր պես թշվառ դարձնելու Լյուցիֆերի ցանկությունը (տես 2 Նեփի 2.27):

Իր ծառայության ընթացքում Փրկիչն ուսուցանել է. «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. Ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք: Սորանով կ'գիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք» (Հովհաննես ԺԳ.35): Մորմոն մարգարեն սովորեցրել է, որ յուրաքանչյուրս պետք է աղոթենք մեր սրտերի ողջ եռանդով, որպեսզի լցվենք գթությամբ և մյուսների հանդեպ սիրով (տես Մորոնի 7.48):

Սուրբ Հոգին կկրթի և կսրբագործի մեզ, եթե մենք արժանի ապրենք Իր մշտական ընկերակցությանը: Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրն ընտրի լինելու այնպիսի վայրերում և իրավիճակներում, որտեղ կարող է բնակվել Հոգին: Իմ հույսն է, որ յուրաքանչյուրս աղոթի, որ մեր սրտերը լցվեն սիրով և համբերությամբ և մյուսների

հանդեպ գթասրտությամբ: Ես աղոթում եմ, որ մենք խոսենք միայն բարի խոսքեր և սիրող լինենք մեկս մյուսի հանդեպ, ինչպես պատվիրել է Փրկիչը:

Սովորելով սիրել ավելի կատարյալ, ներել ավելի արագ և խուսափել հակառակությունից, մեզանից յուրաքանչյուրը կարող է դառնալ ավելի նման մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, և, այդպիսով, վերադառնալ և հավերժ ապրել մեր Երկնային Հոր հետ: ■

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում կազմակերպվել է առաջին ցիցը

Երեց Նելսոնը Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի հավանությամբ հունիսի 16-ին ստեղծեց առաջին ցիցը Հայաստանում: Երևան Հայաստան Շրջանը այժմ Երևան Հայաստան Ցից է:

Հետևյալ ճյուղերը դարձել են ծխեր ցցում՝ Աջափնյակ ճյուղը, Արաբկիր ճյուղը, Արտաշատ ճյուղը, Մալաթյա ճյուղը և Վանաձոր ճյուղը: Աշտարակ, Չարենցավան, Գյումրի և Երևան ճյուղերը կշարունակեն առայժմ մնալ որպես ճյուղեր:

Հովիկ Հովհաննիսյանը կանչվել է ծառայելու որպես Ցցի Նախագահ, Վարուժան Պողոսյանը որպես նրա առաջին խորհրդական, և Արթուր Սարքսյանը որպես երկրորդ խորհրդական: ■

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոր ցցի ղեկավարների հաստատումը

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցցի նոր նախագահությունը (նստած), Նախագահ Քարտերը, Նախագահ Մալմը, Երեց Նելսոնը, Երեց Մինասյանը (ձախից աջ կանգնած):

Նոր կոչում

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախագահ Ջոն Սթիվեն Քարլսոնը իր տիկնոջ հետ:

Ջոն Սթիվեն Քարլսոնը՝ 58 տարեկան և Լորետա Դայան Փոթս Քարլսոնը ունեն չորս երեխա: Նրանք Փրայս Յուտա Հյուսիսային Ցցի Փրայս 6-րդ ծխից են: Նա կանչվել է ծառայելու իր տիկնոջ հետ Հայաստան Երևան Միսիայում որպես Միսիայի Նախագահ:

Եղբայր Քարլսոնը եղել է ծխի Երիտասարդ Տղամարդկանց նախագահությունում խորհրդական, ցցի նախագահ, ցցի նախագահության խորհրդական, եպիսկոպոս, ծխի Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ և միսիոներ Կալիֆոռնիայի Լոս Անջելոս Միսիայում: Նա Steve's Plumbing ընկերության սեփականատերն է: Ծնվել է Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, Ջոն Դեյվիդ Քարլսոնի և Բեվերլի Շելդոն Դիսփեյնի ընտանիքում:

Քույր Քարլսոնը եղել է ծխի Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ և ցցի Երիտասարդ Կանանց նախագահ, Երեխաների Միության նախագահության խորհրդական, երգչախմբի ղեկավար: Ծնվել է Փրայսում, Յուտա, Ռոբերտ Լյուիս և Լեոնա Քոլին Փոթսի ընտանիքում: ■

Երևան Շրջանի Սփոփող Միության միջոցառում. Հաստատուն լինել ծառայության մեջ

Սաթենիկ Գևորգյան, Երևան ճյուղ

2013 թվականի մարտի 23-ին տեղի ունեցավ շրջանի Սփոփող Միության միջոցառում Արաբկիր ճյուղում: Մասնակցում էին Հայաստան Երևան շրջանի բոլոր ճյուղերը: Քույրերին ողջույնի խոսքով դիմեց շրջանի Սփոփող Միության Նախագահ Սուսաննա Մերգոյանը: Նա պատմական ակնարկ կատարեց Եկեղեցու Սփոփող Միության կազմավորման վերաբերյալ, հորդորեց քույրերին աջակցել քահանայությանը, հաստատուն լինել ծառայության մեջ, ինչպես նաև քաջալերեց չվախենալ դժվարություններից և պատրաստակամ լինել միմյանց օգնելու գործում: Միջոցառման նպատակն էր ուսուցանել քույրերին ամրապնդել և ակտիվացնել այցելությունները, կատարել տաճարային աշխատանք, վճարել լրիվ տասանորդ, կրել պատշաճ հագուստ, լինել ակնածալից հաղորդության ժողովի ժամանակ:

Սփոփող Միության այս միջոցառման բնորոշ գիծն էր, որ բոլոր ճյուղերի նախագահները կիսվեցին իրենց ճյուղերի անդամների ջանքերով կազմակերպած հետաքրքիր ներկայացումներով, որոնք լավ տպավորվեցին մասնակիցների մեջ: Արաբկիր ճյուղի Սփոփող Միության Նախագահ Սիլվա Ղազարյանը իր ելույթում հիշեց, թե ինչպես կազմակերպվեց Եկեղեցու Սփոփող Միությունը: Նա նշեց նաև մայրության կարևորությունը: Նա հորդորեց քույրերին իրենց երեխաներին դաստիարակել այնպես, որ նրանք կանգնեն որպես Աստծո վկաներ: Արաբկիր ճյուղը ներկայացրեց նաև, թե ինչպես միջոցառմանը ներկա քույրերը ճիշտ կազմակերպեն իրենց ընտանեկան երեկոները:

Աջափնյակ ճյուղից Լաուրա Կարապետյանը, որն Աջափնյակ ճյուղի Սփոփող Միության նախագահն է, խոսեց տնային այցելությունների կարևորության մասին և մեզ հետ կիսվեց այն հետաքրքիր լուծումներով, որոնք օգնել են իրենց ճյուղում այցելող քույրերի ծառայությունը դարձնել բավականին արդյունավետ: Նրանք իրենց ճյուղում մի հետաքրքիր ձև էին գտել այցելող քույրերին հիշեցնելու, որ իրենք պետք է այցելեն, զանգահարեն կամ սնուցեն այն քույրերին,

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՀՈՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՐՈՒՄԻՑ

Երևան Հայաստան Շրջանի Սփոփող Միության միջոցառումը

ում պետք է այցելեն: Նրանք գնել էին տնային ծաղիկներ, ամեն մեկին նվիրել մեկ ծաղիկ, որը նրանք պետք է խնամեին, ջրեին, որպեսզի այդ ծաղիկը խնամելիս հիշեին այն քրոջը, որը նույնպես սնուցման և խնամքի կարիք ուներ: Եվ դա բավականին ակտիվացրել էր աշխատանքը:

Աշտարակ ճյուղը ներկայացրեց «Ցույց տուր, որ լույսով քայլեմ» հիմնը:

Երևան ճյուղից Մարգարիտա Այվազյանը խոսեց տաճարային աշխատանքի և ընտանեկան պատմության կարևորության մասին: Գյումրի ճյուղի քույրերը բեմադրեցին, թե ինչպես դիմակայել սատանայի գայթակղություններին, իսկ Արտաշատ ճյուղի քույրերը ներկայացրեցին, թե ինչպիսին պետք է լինի կիրակնօրյա պատշաճ հագուստը և ինչպիսի հագուստ պետք է կրեն ՀՔՎՕՍ Եկեղեցու կանայք: Մալաթյա ճյուղի կանայք ներկայացրեցին իրենց ձեռքի շնորհները՝ գեղեցիկ կարված վերմակներ, ձեռագործ զարդեր, հագուստ, ասեղագործված սփռոցներ: Ամեն ինչ շատ գեղեցիկ էր արված՝ մեծ վարպետությամբ ու սիրով: Միջոցառման հյուրասիրությունը պատրաստել էին գրեթե բոլոր ճյուղերի քույրերը, իրենց բազմատեսակ և համեղ խմորեղեններով:

Միջոցառմանը զգացվում էր միասնության, սիրո և լավատեսության ոգին: ■

Սիոնի քույրերը

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՀՈՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՐՈՒՄԻՑ

Երևան Հայաստան Շրջանի ուսուցումը

Հասվիրա Մինասարյան, Երևան Ճյուղ

2013թ. հունվարի 7–9-ին Աղավնաձորում տեղի ունեցավ ղեկավարների երեքօրյա ուսուցում:

Այն մեծ իրադարձություն էր, երբ շուրջ 100 հոգի ղեկավարներ էին հավաքվել Տարածքային Յոթանասունական Ա.Մինասյանի նախագահությամբ:

Ծրագիրը խիստ հագեցված էր և շրջանի ղեկավարությունը մեծ ջանքեր էր գործադրել, որպեսզի այն անցներ լիարժեք և լավ նախապատրաստված: Կարելի է ասել, որ 20 տարիների ընթացքում իր ծավալով սա առաջին ուսուցումն էր, որն ընդգրկում էր այնպիսի ծավալուն և նպատակային հարցեր, որոնք առաջադրվել էին *Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանի ղեկավարության կողմից*: Երեց Մինասյանն անդրադարձավ 14 նպատակակետերին և դրանց թվային և տոկոսային արտահայտման անհրաժեշտությանը, նշելով, որ Աստված արագացնում է Իր աշխատանքը: Նա անդրադարձավ Ընտանիքը և Եկեղեցին Աստծո ծրագրում Բ Ձեռնարկ 1-ի՝ Ավետարանը բերել անդամների տները թեմային, խոսեց տասանորդի օրենքի և այն օրհնությունների մասին, որ այն բերում է մեր կյանք, քահանայության զորացման, նրա շարքերի լրացման ուղիների վերաբերյալ, կանգ առնելով միսիոներական աշխատանքի, Ահարոնյան քահանայություն կրող անդամներին Մելքիսեդեկյան Քահանայության համար նախապատրաստելու և այլ ուղիների վրա: Նա հատկապես կանգ առավ լրիվ տասանորդ վճարելու կարևորության վրա, նշելով, որ Աստծո արքայության կառուցումը նման է մի փոշեկուլի, որը ներծծում է մեր ժամանակը, ջանքերը, էներգիան, ունեցվածքը և ամեն ինչը՝ փոխարենը խոստանալով հավերժական կյանք: Երեց Մինասյանը բարձր գնահատեց շրջանի նախագահության ջանքերը, նշելով որ այն խանդավառությամբ և մեծ թափով է սկսում տարին՝ կազմակերպելով այդ ուսուցումը: Նա խրախուսեց նրանց նույն ձևով շարունակել, որպեսզի այս տարում մենք ցից ունենանք Հայաստանում, ապա՝ տաճար:

Շրջանի Նախագահության Առաջին Խորհրդական Ի.Պողոսյանը խոսեց Քահանայության սկզբունքները, Բ Ձեռնարկ 2-ի և նաև օժանդակ

Ղեկավարների ուսուցում Աղավնաձորում

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԱԼԼ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

կազմակերպությունների դերի մասին: Մեծ հիացմունքով մեջբերելով Եկեղեցու Նախագահների ուսմունքներից, հատկապես Ջոզեֆ Սմիթի, Բրիգամ Յանգի, Լորենզո Սնոուի և Ջորջ Ալբերտ Սմիթի խոսքերը, հստակորեն երևում էր, թե ինչպիսի մեծ ազդեցություն է ունեցել Եկեղեցու Նախագահների կյանքն ու նրանց ուսմունքները Իգիթ Պողոսյանի կյանքի և հավատքի վրա: Նա արտահայտեց իր սերն Ավետարանի հանդեպ մի պատկերավոր նախադասությամբ, ասելով, որ «եթե ողջ աշխարհի գրքերը հավաքես, Ավետարան չի լինի»:

Բոլոր 14 կետերը մանրամասնորեն քննակելուց հետո, Վարուժան Պողոսյանը դերակատարման եղանակով ցուցադրեց, թե ինչպիսին պետք է լինի օրինակելի Հաղորդության արարողությունը, որպեսզի անցնի ակնածալի ձևով և հայտնության աղբյուր ծառայի անդամների համար:

Բոլոր մասնակիցները շատ գոհ էին ուսուցումից և բոլորը միահամուռ արտահայտեցին ցանկություն, որ այդպիսի ուսուցումներ հաճախ կազմակերպվեն, որովհետև շատ բան սովորեցին, զորացվեցին հավատքով, զգացին Հոգու ուժեղ ազդեցությունը և խանդավառությամբ տրամադրվեցին կատարելու Տիրոջ գործը: Շրջանի Նախագահ Հովիկ Հովհաննիսյանի անկեղծ, համբերատար և խանդավառ ջանքերը տվեցին իրենց արդյունքը: Հրաշալի նախապատրաստված ուսուցումն ավարտվեց այն հույսով, որ բոլոր ձեռք բերված գիտելիքները կվերածվեն գործի: ■

Այցելություն մանկատունը

Սիրանուշ Քոչարյան, Երևան ճյուղ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Այցելություն մանկատուն

2013 թվականի փետրվարի 19-ին Երիտասարդ Կանայք այցելեցին Խարբերթի մանկատունը: Ղեկավարների նպատակն էր փափկացնել երիտասարդ կանանց սրտերը և ոգեշնչել նրանց գնահատել այն, ինչ ունեն: Սա մեր երկրորդ այցելությունն էր այնտեղ, և երբ մենք ներս մտանք սենյակ, երեխաները մեզ ճանաչեցին և ավելի հեշտ էր նրանց հետ շփվելը, մեզ հետ ավելի բաց և անմիջական էին: Այդ ժամանակ, երբ նրանց հետ էինք, անսահման սեր զգացի նրանց հանդեպ, նրանց հոգ տանելու ուժեղ զգացում:

Լիլիթ Սարգսյան, Արաբկիր ճյուղ Շատ դժվար է պատմել այն տպավորությունները, որոնք ստացա և այն զգացումները, որոնք ունեցա այդ վայրում: Մեր հիանալի ղեկավարների աջակցության շնորհիվ մի խումբ երիտասարդ աղջիկներով մենք գնացինք մանկատուն: Այնտեղ բոլոր երեխաներն այնքան լավն էին, այնքան բարի, հոգատար, կամեցող, որ ամեն ոք կկամենար ունենալ այդքան շատ հիանալի բնավորության գծեր: Նրանց աչքերում տեսնում էի ուրախություն, բայց միևնույն ժամանակ նաև խորը տխրություն… Նրանց աչքերը խոսում էին սպասման մասին, քանի որ հույս ունեին, որ մի օր դուռը կբացվեր և նրանց ծնողները ներս կմտնեին: Նրանք փորձում էին ձեռք բերել ընկերներ, որոնց կարիքը շատ ունեին: Միշտ կփորձեմ անել ամեն ինչ, որպեսզի ինչ որ բանով նրանց կարողանամ օգտակար լինել: Շնորհակալ եմ Աստծուն, որ կարողանում եմ խոսել, քայլել և արտաբերել այն ամենը, ինչ ցանկանում եմ ասել դիմացինիս: Եկեք աջակցենք մանկատան երեխաներին և ցուցաբերենք մեծ սեր, որպեսզի նրանք էլ միշտ ուրախ լինեն և իրենց լիարժեք զգան: ■

Շրջանի Երեխաների Միության Միջոցառում

Արմանուշ Մարգարյան, Աջափնյակ ճյուղ Երևան, Հայաստան Շրջան

2013 թվականի մարտի 23-ին Արաբկիր ճյուղում տեղի ունեցավ շրջանի ևս մեկ միջոցառում Երեխաների միության համար: Միջոցառման նպատակն էր՝ օգնել երեխաներին հասկանալ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն ու Քավիչն է, և ձգտել նմանվել Նրան: Միջոցառմանը մասնակցում էին 60 երեխա՝ տարբեր ճյուղերից: Ծրագիրը բավականին հագեցած էր:

Հոգևոր միտք էր պատրաստել Անի Սարգսյանը՝ Արաբկիր ճյուղից, Հանգստյան օրը սուրբ պահելու, տասանորդ վճարելու, պարկեշտ հագնվելու մասին: «Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է» թեմայով դաս էր պատրաստել Արմանուշ Մարգարյանը՝ շրջանի Երեխաների Միության նախագահի երկրորդ խորհրդականը: Դասն անցավ հետաքրքիր՝ երեխաների ակտիվ մասնակցությամբ: Այնուհետև բոլոր ճյուղերի Երեխաների Միության ղեկավարների օգնությամբ երեխաները ներկայացրեցին պատրաստած պատմություն Ջոզեֆ Սմիթի կյանքից, հատվածներ Սուրբ գրություններից, առաջադրվեցին հանելուկներ, բեմականացում տասանորդի թեմայով, ներկայացվեցին պարային համարներ և կատարվեց համատեղ երգի ուսուցում: Այնուհետև անցկացվեցին հոգևոր թեմաներով խաղեր, որոնք կազմակերպել էր Նունե Վարդանյանը: Միջոցառումն անցավ երեխաների ակտիվ մասնակցությամբ: Նրանք բարձր տրամադրություն և շատ գիտելիքներ ստացան: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՂՄԻՑ

Երեխաները սիրում են միասին ժամանակ անցկացնել:

ԼՈՒՍԱՆԿԱՐ. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՂՄԻՑ

Շրջանի Երեխաների Միության Միջոցառումը

Դառնալ Սիոնի ժողովուրդ

Ռիս Ա. Քարտեր, former Երևան Հայաստան Միսիայի Նախագահ

Յուրաքանչյուրս անհամբեր սպասում է Փրկչի Երկիր վերադառնալուն և հազարամյա դարաշրջանի մուտքին, երբ Քրիստոսը կթագավորի անձնապես հազար տարվա խաղաղության ժամանակահատվածում: Քրիստոսի վերադարձի հետ կապված կվերադարձվի Ենովքի քաղաքը, որի բնակիչները ձեռք բերեցին «Սիոնի» քաղաքացիություն, երբ, նույնիսկ, ապրում էին մահկանացու կյանքում: Մենք կարդում ենք նրանց մասին Մովսեսի գրքում. «Նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին, և բնակվում էին արդարության մեջ» (Մովսես 7.18): Նրանք մի ժողովուրդ էին, որոնք հասկանում էին Փրկչի խոսքերը, որ «Նա, ով ունի հակառակության ոգին, ինձանից չէ» (3 Նեփի 11.29): Նրանք սկսեցին սիրել մեկ մեկու՝ միմյանց ծառայելու միջոցով:

ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախագահ և Քույր Քարտերներ

Մայրը սիրում է իր դեռ չծնված երեխային, որովհետև, նույնիսկ, նախքան նրա ծնվելը նա զոհաբերել է հանուն իր մանկան: Նախքան մեզանից որևէ մեկի ծնվելը Հիսուս Քրիստոսն առաջ եկավ նախամահկանացու խորհրդում երկնքում և իրեն առաջարկեց որպես զոհաբերություն բոլոր նրանց համար, ովքեր դեռ ծնվելու էին: Լիովին գիտակցելով, թե ինչ էր դրա համար իրենից պահանջվելու, Նա այնուամենայնիվ ասաց. «Ահա ես, ինձ ուղարկիր» (Աբրահամ 3.27): Պահանջվող տառապանքը ողջ մարդկության մեղքերի համար կատարվեց Նրա անսահման քավությամբ: Կրիտիկական ժամին, երբ Նա մի կարճ պահ զգաց, որ ուզում էր ընկրկել, այնուամենայնիվ ճաշակեց դառը բաժակից և մեզանից յուրաքանչյուրի համար բացեց իրական հնարավորություն՝ մեր Հոր ներկայություն վերադառնալու՝ Նրա հետ հավերժորեն ապրելու համար: Նրա կողմից դա անսահման և գերագույն սիրո արարք էր:

Հենց Իր խաչելությունից առաջ Հիսուսը հրահանգեց Իր առաքյալներին հետևել Իր օրինակին: Նա ասաց. «Իրար սիրէք. ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք: Սորանով կգիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթե իրար վերայ սէր ունենաք» (Հովհաննես ԺԳ. 34, 35):

Նա նախկինում տվել էր նրանց միմյանց սիրել սովորելու բանալին: Հակոբոսի և Հովհաննեսի մայրը եկավ Հիսուսի մոտ, կամենալով, որ իր երկու որդիներից մեկը լիներ Նրա աջ կողմում, իսկ մյուսը Նրա ձախ կողմում Աստծո արքայությունում: Երբ մյուս տասը առաքյալները լսեցին նրա խնդրանքի մասին, մի պահ թվաց, թե նախանձության զգացումներ սողոսկեցին նրանց մեջ: Նրանց զգացումները խաղաղեցնելու և մի հավերժական սկզբունք նրանց սովորեցնելու համար, Հիսուսը խոսեց նրանց հետ ասելով. «Եւ ձեզանից ով որ կամենայ առաջինը լինել թող ձեզ ծառայ լինի» (Մատթեոս Ի.27): Նա Ինքը օրինակ էր այն բանի, ինչ ուսուցանել էր, երբ լվաց առաքյալներից յուրաքանչյուրի փոշոտ ոտքերը: Երկրի Արարիչը՝ Աստծո Որդին կատարեց տան ծառայի աշխատանքը:

Այս վերջին տնտեսությունում մեր պարտականությունն է և արտոնությունը՝ պատրաստել Երկիրը Քրիստոսի վերադարձի համար: Մենք պետք է կրկին դառնանք «Սիոնի» ժողովուրդ, որոնց մեջ չկա հակառակություն կամ նախանձություն, այլ ավելի շուտ մաքուր սեր: Մի սեր, որը ստիպում է մեզ ծառայել, նույնիսկ զոհաբերել միմյանց համար: Օրինակը մեր առջևում է՝ Վարդապետի կյանքում և ուսմունքներում: Մորոնին կոչ արեց մեզ իր հրաժեշտի վկայությամբ. «Աղոթեք Հորը , սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, … որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման» (Մորոնի 7.48, 10.32): Թող որ մենք որպես ժողովուրդ սովորենք լինել մեկ սրտով և մեկ մտքով, սիրելով և ծառայելով միմյանց: Թող որ մենք ընդունենք Մորոնիի վերջին հրավերը. «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք Նրանում» (Մորոնի 10.32), որ երբ Նա վերադառնա, մենք ճանաչենք Նրան և Նրա կողմից ճանաչվենք, քանի որ մենք դարձած կլինենք Նրա նման: ■

Ես գտա հավերժական կյանք տանող ճանապարհը այս գրքի օգնությամբ

Սաթենիկ Ղուկասյան, Արաբկիր ճյուղ, Հայաստանի Երևան միսիա

Ես 30 տարեկան էի՝ այն տարիներն էին, երբ ինքդ քեզ վերլուծում ես, հաշվում ձեռքբերումներդ ու ձախողումներդ: Ես դեմ էի առել պատին, ինձ չէի ներում իմ սխալների համար, հիասթափված էի իմ սիրած տղամարդուց ու կյանքից և նույնիսկ ուզում էի մահանալ: Երկու օր, գորգին ընկած, լաց էի լինում և Աստծուն խնդրում էի վերցնել իմ հոգին, որովհետև էլ ուժ չունեի ապրելու: Հենց այդ գորգին էլ՝հոգնած լինելով քնել էի և տեսել մի երազ: Երազումս շատ հետաքրքիր բաներ տեսա և շատ դժվարությունների միջով անցնելով, հասա մի վայր, որը խորհրդանշում էր Աստծո տաճարը: Արթնանալուց հետո ես թղթին հանձնեցի զգացումներս և երազիս մանրամասները: Ես գրեցի, որ զգում եմ, որ կյանքում կտեսնեմ գեղեցկություններ ու կյանքի պայքարների մեջ ես կհաղթեմ, որ ես չպետք է հուսահատվեմ: Եվ այդ օրվանից զգացել եմ, որ Աստված իմ կողքին է և ինձ շատ է սիրում: Կյանքը ինձ համար փոխվեց ես կարծես նորից էի ծնվել: Ինձ համար արժեզրկվեց աշխարհի անցողիկ գեղեցկությունները՝ ես ապրում էի Աստծո տան գեղեցկությամբ, որն անփոխարինելի էր: Ես սկսեցի ամեն ինչին ուրիշ աչքերով նայել, կյանքում փնտրել ամենակարևորը. փոխվեցին նաև կյանքի արժեքները: Ես սիրո քաղց էի զգում՝ անբացատրելի մի զգացում, որին փնտրում էի պատասխան գտնել:

Ես չգիտեի, թե ինչ է տաճարը և այն ամենը, ինչ տեսել էի երազում, և սկսեցի հաճախել տարբեր եկեղեցիներ՝ անհագ ծարավով կարդալով բոլոր հոգևոր գրքերը: Այդ տարիներին ես փորձեցի ինձ վերափոխել: Որոշ ժամանակ անց ձեռքս պատահական ընկավ «Մորմոնի գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին» գիրքը, և ես, դեռ եկեղեցի չգնացած, կարդացի այն: Երբ սկսեցի այդ գիրքը կարդալ, մի գեղեցիկ զգացում պատեց ինձ, մի սիրո քամի, հոգիս սավառնում էր, և ես չէի կարողանում կտրվել այդ գրքից: Ես սկսեցի մտածել, վերլուծել՝ ինձ թվում էր ես գտել էի այն, ինչ երկար փնտրում էի:

Հաճախեցի եկեղեցի, ստացա վկայություն «Մորմոնի Գրքի» մասին, մկրտվեցի և 3 տարի անց այցելեցի Աստծո տաճար: Երբ տաճար գնացի, ես գտա իմ 19 տարիների փնտրած երազը և զգացի իմ հոգում այն նույն երաժշտությունը, որը զգացել էի երազում:

Ես հասկացա, որ 19 տարի Աստված ինձ փոխում էր, պատրաստում, որ բերի տաճար. այդ տարիների ընթացքում ես մաքրվում էի: Նա իմ հոգում սիրո քաղց էր դրել ու թողել էր ինձ, որ ես զտվեմ փորձությունների կրակով:

Տաճարում ես զգացի Աստծո փառքը: Զգացի իմ նախնիների հոգու ներկայությունը, ում համար տաճարային աշխատանք էի կատարում:

Ես երջանիկ եմ, որ Աստված ինձ արժանի դարձրեց կարդալ Մորմոնի Գիրքը, գտնել Իր եկեղեցին, գտնել Իր տուն տանող ճանապարհը և հավերժական կյանքի ուղին: Ես հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո ճշմարիտ եկեղեցին է, հավատում եմ, որ կա հավերժական կյանք, ինչը ես զգում եմ և ինչը ինձ ցույց տրվեց տաճարում: ■

Սաթենիկը զգաց Երկնային Հոր սերը տաճարում:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ԱԼԼԱ ՍԱՐՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ